

ներուն առիթով, իր միջոցներով, կը շրջագայի Սփիուքի հայահոծ քաղաքներ, ի մասնաւորի Փարիզի, Սէն Ռաֆայէլի, Հալէպի, Քեսապի, Քամիշլիի, Աթենքի, Տիբրոյթի, Լոս Անճելըսի հայկական ծերանոցները եւ կը ծայնագրէ Հայոց Յեղասպանութենէն վերապրած մամիկներն ու պապիկները: Այսպէսով, ան կը յաջողի հաւաքել ցարդ անծանօթ, մոռցուած եւ ազգագրական/բանահիւսական արժէք ներկայացնող մեղեդիներ, տոհմիկ երգեր:

Ալահայտոյեան լոյս ընծայած է *Բալուի (եւ փարաժաշրջանի) երաժշտական-ազգագրական հաւաքածոյ* հատորը երկու խտասալիկներով միատեղ, (2009), *Վան-Վասպուրականի ազգագրական բնորոշ երգային նմուշները* երկու խտասալիկով (2015): 2017էն իվեր, իր ծայնագրած երգային նմուշները աշխարհագրական բաժանումներով մաս առ մաս լոյս կը տեսնեն *Յուշամատեն* կայքէջին վրայ: Իր վերջին կոթողական աշխատութիւնը - գործակցութեամբ երաժշտական խմբագիր եւ համակարգչային նոթագրող դոկտ. Ծովիկ Մկրեան-Մարգարեանի - *Բարսեղ Կանաչեանի երաժշտական երկերու ժողովածուն* է (2019), որ կը պարունակէ Կանաչեանի երաժշտական ամբողջական վաստակը կազմող մեներգերն ու խմբերգերը վերանայուած, սրբագրուած:

Ան կարեւոր ներդրում ունեցած է Համազգայինի նախաձեռնած 12 խտասալիկներու հրատարակման, գրելով անոնցմէ շատերուն յառաջաբանները: Այս խտասալիկները կ'ընդգրկեն ընդհանրապէս սփիւքահայ հեղինակներու երկեր: Համազգայինի հետ իր վերջին գործը եղաւ Կանաչեանի ամբողջական երկերուն թուայնացումը (դոկտ. Ծովիկ Մկրեան-Մարգարեանին հետ):

Ան 2021ին իր երգահաւաք-երաժշտաբանի աշխատանքին արգասիքը կազմող ծայնագրութիւնները, շուրջ 550 ծայներիգ, նուիրեց ՀՀ ԳԱԱ Ժողովրդական երաժշտութեան բաժնի Արամ Քոչարեանի անուան ծայնադարանին:

Պետրոս Ալահայտոյեան մահացաւ 11 Սեպտեմբեր 2022ին: Թաղման պաշտամունքը կատարուեցաւ 3 Հոկտեմբերին Կլենտէյլի Հայ աւետ. եկեղեցիին մէջ:

ՌՈՒՊԻՆԱ ԱԼԱՀԱՅՏՈՅԵԱՆ-ԱՐԹԻՆԵԱՆ
roubina.artinian@haigazian.edu.lb

ՍԵՐԳԷՅ ԳԱԼՍՏԵԱՆ
(1940–2022)

Շարժանկարի մասնագէտ, արձակագիր, լրագրող, բեմագրող, Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի վաստակաւոր գործիչ Սերգէյ Սարգսի Գալստեանը ծնուել է 1940ի Յունուարի 5ին, Վրաստանի Ծալկայի շրջանի Քարագլուխ գիւղում: 1967ին աւարտել է ԵՊՀ բանասիրական բաժնի



լրագրության ճիւղը: 1967-68՝ աշխատել է Երեւանի վաւերագրական շարժանկարների կինոստուդիայում որպէս խմբագիր, 1968-74՝ *էկրան* ամսագրի խմբագրութիւնում որպէս պատասխանատու քարտուղար, 1974-75՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդի հեռուստատեսութեան եւ ռադիոհաղորդումների պետական յանձնախմբում որպէս խմբագիր: 1975ից աշխատել է Հայաստանի Գրողների միութիւնում, նախ՝ որպէս գրական խորհրդական, 1978ից՝ գեղարուեստական գրականութեան քարոզչութեան կենտրոնի տնօրէն: Գալստեանի բեմագրերով նկարահանուել են վաւերագրական եօթ շարժանկարներ՝ «Ասես երէկ էր», «Երկու բերք նոյն հողամասից», «Ար-տաշէս Հայ-Արտեան», «Վարպետը» եւն.:

Նրա առաջին գրքովները հայ շարժանկարի գործիչների դիմանկարներ էին՝ *Սօս Սարգսեան* (1980), *Արմէն Զիգարիսանեան* (1981) եւ *Գուրգէն Թոնունց* (1982): Յետագայում Գալստեանը շարունակել է ստեղծել այլեւայլ գործիչների ստեղծագործական դիմանկարներ՝ *Գուժ Մանուկեան [դերասանի մասին]* (1987), *Ֆրունզէ Դովլաթեան* (1997), *Կանխարեսութիւն ըստ Սահակեանցի. սրբեղծագործական ուղին* (2011), *Կեանքը ափի մէջ. կինոռեժիսոր Ռուբէն Գէորգեանց. սրբեղծագործական ուղին* (2011, հայերէն եւ ռուսերէն), *Կարակերգութիւն՝ ըստ Ներսէս Յովհաննիսեանի [սրբեղծագործական ուղին]* (2013), *Եւրի Բաբախանեան* (2016), *Արմէն Խաչատրեան. դիմանկարի էքզիզ, Գագիկ Սրեփանեան. դիմանկարի էքզիզ եւ Աշոտ Մովսէսեան. դիմանկարի էքզիզ* (վերջին չորսը՝ 2017): Հայ խաղարկային եւ փաստագրական շարժանկարի տարբեր գործիչների դիմանկարներ են ամփոփում Գալստեանի *Անուններ էկրանի վրայ* (1984) եւ *Հայելի. օրն սկսում է քեզանով* (2000) ժողովածուները:

Գալստեանն առաջին մասնագէտն էր, որ գրեց առաջին հայերէն գրքերը բազմանկարային արուեստի եւ մասնաւորապէս՝ հայկական բազմանկարի մասին՝ *Հրաշքներ, որ կատարւում են ամէն օր [գրոյցներ]* (1989), *Երբ շնչաւորւում է հեքիաթը. գրոյցներ մուլտիպլիկացիայի մասին* (2003) եւ *Կախարդական գորգ. հայկական անիմացիոն կինօ* (2008): Յատկանշական է վերջինը, որը հայ բազմանկարչութեան համապարփակ պատմութիւն է: Գրքի առաջին մասում հեղինակը հնարաւորինս օգտագործել է մամուլի նիւթերը՝ իր պատմական խօսքն ամրագրելով ժամանակակիցների վկայութիւններով, հայ կինոգէտների եւ մտաւորականների՝ բազմանկարչութեան վերաբերեալ գրուած հատուկենտ յօդուածներից կատարած մէջբերումներով: Նա իրաւացիօրէն հայ բազմանկարի առաջացումն ու զարգացումը դիտարկում է խորհրդային անիմացիոն շարժանկարի ընդհանուր համաբնագրում՝ կենտրոնանալով նրա լաւագոյն նմուշների փոքրիշատէ մանրա-

մասն քննության վրայ: Փաստեր, իրողություններ եւ կարծիքներ շարադրելով՝ Գալստեանը կատարում է ուշագրաւ ընդհանրացումներ եւ եզրայանգումներ: Այսպէս, ըստ նրա, 1970ականները բնորոշում են *«հայ մովսրհալիկաւորների տեխնիկական, մասնագիտական ձեռքբերումների, վարպետացման, 'փոքր' կինոյի 'հմայքներին' անմնացորդ նուիրումի ձգտումներով»*, իսկ 1980ականներից սկսում են հայկական կինոյի զարգացման միտումները: Պատմական այս ակնարկից յետոյ գալիս է գրքի հիմնական՝ «Զրոյցներ մեկնաբանութիւններով» ընդարձակ բաժինը, որտեղ հեղինակը խօսքը տուել է տասներեք բազմակարիչների:

Մինչեւ Գալստեանը՝ հայ վաւերագրական շարժանկարը չէր դարձել առանձին համակողմանի ուսումնասիրութեան առարկայ: Նրա *Ժամանակը եւ փաստը. ակնարկներ հայ կինովաւերագրողների ու նրանց ֆիլմերի մասին* երկմասանի գիրքը (2013-14) լրացնում է հայ մշակոյթի պատմութեան այդ գրեթէ չուսումնասիրուած բնագաւառը: Հեղինակը իր ներկայացրած առարկայի ժամանակագրողն է, գնահատողը, յաճախ նաեւ՝ վկան եւ անմիջական մասնակիցը (շուրջ 14 տարի վարել է *Վաւերագրական կինոյի ժամ* հեղինակային հեռուստահաղորդաշարը): Գալստեանին յաջողուել է իր քննելիք լայնածաւալ նիւթը (հայ փաստագրական կինօն ընդգրկում է աւելի քան 2000 շարժանկար) ներկայացնել պատմողական-վերլուծական կերպով, ըստ ժամանակաշրջանների եւ ըստ կինոգործիչների կեանքի եւ ստեղծագործութեան: Գիրք առաջինում հայ փաստագրական շարժանկարի անցեալն իր ընդհանուր կողմերով շարադրուած է արխիւային նիւթերի, ժամանակի մամուլի, ժամանակակիցների վկայութիւնների հիման վրայ՝ տալով թեմատիկ, ոճային բնորոշումներ, կատարելով ուշագրաւ ընդհանրացումներ: Եւ եթէ գրքի առաջին մասում նա հանդէս է եկել որպէս բարեխիղճ կինոպատմաբան, ապա երկրորդում՝ որպէս հմուտ կինոքննադատ, որը մե'րթ ակնարկային, մե'րթ լրագրական ոճով իր խօսքն է ասել հայ փաստագրական կինոյում իրենց որոշակի խօսքն ասած տարբեր սերունդների վաւերագրողների եւ առանձին շարժանկարների վերաբերեալ: Հիմնականում հակիրճ, սակայն խիստ բնութագրական են հայ վաւերագրողներից շատերի ստեղծագործական դիմանկարները եւ նրանց լաւագոյն ստեղծագործութիւնների վերլուծութիւնները: Աշխատութեան ճանաչողական արժէքը բարձրացնում են նաեւ հիմնական նիւթը լրացնող առանձին կինոգործիչների կենսագրութիւնները:

Գալստեանի վերջին կինոգիտական աշխատութիւնները վերաբերում են հայ շարժանկարի երկու բացարձակ մեծութիւններին՝ *Փարաջանով. հանդիպումներ եւ ոչ միայն* (2020) եւ *Փելէշեան. մեր ժամանակների լեզունդը* (2021, հայերէն եւ ռուսերէն):

Գալստեանը կազմել եւ խմբագրել է *Լոյս զուարթ. քերթուածներ* (2014, ընդգրկում են Լեւոն-Զաւէն Սիւրմելեանի բանաստեղծութիւնները) եւ *Սիւր-*

Միլոմելեանը եւ Հայաստանը (2016) ժողովածուները: Հրատարակել է նաեւ երկու վէպ՝ Ովսաննա-օրինություն առ Աստուած (2003) եւ Մատարո (2019):
Սերգէյ Գալստեանը մահացաւ 2022ի Օգոստոսի 26ին, Երեւանում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com



ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1930-2022)

Գրականագէտ պրոֆեսոր Արամ Գրիգորեանը ծնունդ է 28 Սեպտեմբեր 1930ին, Թիֆլիս:

1953ին աւարտել է ԵՊՀ: 1958-63՝ Մանուկ Աբեղեանի անուան գրականության ինստիտուտի (ՄԱԳԻ) գիտաշխատող, 1964-71՝ աւագ գիտաշխատող, 1989-94՝ փոխտնօրէն, 1994ից ՄԱԳԻ խմբի ղեկավար: 1979-88՝ եղել է Հայաստանի Գրողների միության քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր՝ 1970ին, 1996ին ընտրուել է ակադեմիկոս, 2000-4՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: 1967ից անդամ՝ Հայաստանի եւ ԽՍՀՄ Գրողների միությանց: Դասաւանդել է Հայ-Ռուսական համալսարանում. այնտեղ 2003ից գիտական ղեկավարն էր Ռուսական բանասիրության ինստիտուտին եւ անդամ՝ ՌՀՀ բանքերի խմբագրական-հրատարակչական խորհրդին:

Գրիգորեանի հիմնական աշխատությունները վերաբերում են գրականության տեսությանը, հայ գրականության պատմությանը եւ ազգային առանձնայատկություններին: Նրա ւեյլի քան հարիւր յօդուածները լոյս են տեսել գիտական եւ գրական տարբեր պարբերականներում, նաեւ՝ մոսկովեան Վոպրոսի լիւերալուրի, Դրուժբա նարոդով, Լիւերալուրնայա գազետա, Սովետսկայա կուլտուրա եւն.: Ունի բազմաթիւ ուսումնասիրություններ ակադեմիական տարբեր հատորեակներում, ինչպէս՝ Խորհրդային բազմազգ գրականության պատմություն, Հայ գրականության պատմություն եւ այլ հատորաշարքերում: Խմբագրել է բազում գրքեր, համահեղինակ է մի շարք ռուսերէն եւ հայերէն գրքերի, ինչպէս՝ Գեղարուեստական ոճի եւ պարկերի կառուցուածքը (ռուսերէն, 1974), Աւանդոյթները եւ գեղարուեստական զարգացումը (1976), Սովետահայ գրականության պոեզիական. գրական-տեսական ուսումնասիրություններ (1980), Եղիշէ Չարենցը եւ 1920ական թուականների սովետահայ պոեզիան (1983), Հայ գրականության ազգային առանձնայատկությունները (2003), Հայոց նորագոյն գրականություն. պատմության ուրուագիծ (2004): Հեղինակ է Քննադատությունը եւ գրական պրոցէսը. օգնություն դասախօսին (1979), Գրական երկի կառուցուածքի վերլուծությունը (ռուսերէն, 1984), Ոճային որոնումները եւ